Ներկայացվել է
«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի
խորհրդի 2019 թվականի հուլիսի 17-ի նիստին (12-րդ նիստ)

«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՑ 11-րդ ՆԻՍՏԻՑ ՀԵՏՈ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Կատարված հատուցումներ 2

II. Ֆինանսական հիմնական ցուցանիշեր 5

III. Կատարվող նվիրաբերությունների հարաբերակցություն 6

IV. Դրոշմանիշային վճարների հայտարարագրում՝ ըստ կազմակերպությունների՝ համաձայն ՀՀ և ԱՀ հարկային մարմիններից ստացված տվյալների (ցուցակային) 9

V. Վերադարձեր 10

2019թ.-ի երկրորդ եռամսյակում (2019թ. Ապրիլի 1 – 2019թ. Հունիսի 30) «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

I. Կատարված հատուցումներ

1.1. Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով **առաջին ռեժիմի**[1] **շրջանակներում** տեղի ունեցած դեպքերի մասով կատարվել են հատուցումներ թվով **6 դեպքերի մասով**, որոնցից 3-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքներին, 1-ը՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողի և 2-ը խեղում ստացած զինծառայողի՝ մինչև հաշմանդամության կարգը նշանակվելը:

Զոհված 3 զինծառայողներից՝

- 1-ը՝ պայմանագրային ծառայության ենթասպայական կազմի զինծառայող է, ում հասանելիք հատուցման գումարը կազմում է 70 մլն. ՀՀ դրամ:
- 2-ը՝ պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,

Հաշմանդամություն ունեցող 1 զինծառայողը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի II խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայող է, ում հասանելիք գումարը կազմում է 29 մլն. և 53 մլն. ՀՀ դրամ:

Մինչև հաշմանդամության կարգը նշանակվելու 2 զինծառայողներից

- 1-ը՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայող է
- 1-ը պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայող, որոնց հասանելիք գումարը կազմում է 100,000 հազար դրամ՝ առավելագույնը 6 ամիս:

1.2. Հիմնադրամի կողմից **երկրորդ ռեժիմի**[2] **շրջանակներում** տեղի ունեցած դեպքերի մասով կատարվել են հատուցումներ թվով **2 դեպքերի մասով**, որոնցից 1-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքներին, 1-ը՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողի, որոնցից.

- 1-ը 1-ին կարգի հաշմանդամություն ունեցող, պայմանագրային ենթասպայական կազմի զինծառայողի է, որին հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 300,000 ՀՀ դրամի (զինծառայողը չի ստանում պետության կողմից տրամադրվող կենսաթոշակ քանզի աշխատում է),

[1] **2017թ.-ից հետո տեղի ունեցած դեպքեր**
[2] **2015-2016թթ.-ին տեղի ունեցած դեպքեր**

- 1-ը պայմանագրային ենթասպայական կազմի զոհված զինծառայողի ընտանիքի, որին հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է լրացուցիչ ամսական 100,000 ՀՀ դրամ, քանզի ընտանիքն ունի 3 անչափահաս զավակ (պետական աջակցության և հատուցման գումարի միջև տարբերությունը բացասական է):

1.3. Հիմնադրամի կողմից **երրորդ ռեժիմի**[3] **շրջանակներում** տեղի ունեցած դեպքերի մասով կատարվել են հատուցումներ թվով **62 դեպքերի մասով**, որոնցից 43-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքներին, 19-ը՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողի, որոնցից.

Զոհված 43 զինծառայողներից՝

- **3-ը սպայական կազմի զինծառայողներ,** որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 300,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը:
- **7-ը պայմանագրային ծառայության ենթասպայական կամ շարքային կազմի զինծառայողներ,** որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 250,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը:
- ***33-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողներ,*** որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը:

Հաշմանդամություն ունեցող 19 զինծառայողներից՝

- 8-ը՝ I խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողներ են, որոնցից 7-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ և 1-ը սպայական կազմի զինծառայող, վերջիններիս հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է համապատասխանաբար 200,000 և 300,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը,
- 11-ը՝ II խմբի հաշմանդամություն ունեցող, որոնցից 2-ը սպայական կազմի, 3-ը պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի և 6-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է համապատասխանաբար 200,000, 150,000 և 100,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը:

1.4. Դադարեցվել է թվով 1 զինծառայողի վճարվող հատուցումները, հաշմանդամության III կարգ ձեռք բերելու հետևանքով:

[3] **2015-2016թթ.-ին տեղի ունեցած դեպքեր**

Մինչ օրս Հիմնադրամը տրամադրել է հատուցումներ 314 դեպքերի մասով, որոնցից 74-ն առաջին ռեժիմի, 173-ը երկրորդ ռեժիմի և 67-ը երրորդ ռեժիմի շրջանակներում *(տե՛ս տեկոսային հարաբերակցությունը):*



314 դեպքերից՝ 251-ը զոհված, 60-ը հաշմանդամություն ունեցող, 3-ը խեղում ստացած զինծառայողներ *(տե՛ս տեկոսային հարաբերակցությունը):*



II. Ֆինանսական հիմնական ցուցանիշեր

	Գումար	Տոկոս
Հատուցումներ	**158,023,318**	
Պարտադիր վճարներ	**2,524,951,646**	
Նվիրաբերություններ	**3,762,600**	**100%**
Բանկային փոխանցմամբ	*2,182,464*	*58%*
Կայքի միջոցով	*1,580,136*	*42%*

Մինչ օրս *(01.01.2017-08.07.2019թ.).*

	Գումար
Հատուցումներ	**1,168,955,541**
Հավաքագրված միջոցներ	**16,787,026,511**
Պարտադիր վճարներ	*16,587,063,040*
Նվիրաբերություններ	*199,963,471*

III. Կատարվող նվիրաբերությունների հարաբերակցություն

4.1. Ըստ նվիրաբերությունների քանակի



4.2. Ըստ նվիրաբերությունների մեծության



3.3. Երկրորդ եռամսյակի ընթացքում կատարված նվիրաբերությունների հարաբերակցությունը ըստ ամիսների



3.4. Առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում կատարված նվիրաբերությունների քանակական և գումարային հարաբերակցությունը.



3.5. 2019թ.-ի ընթացքում կատարված նվիրաբերություններ՝ ըստ երկրների



IV. Դրոշմանիշային վճարների հայտարարագրում՝ ըստ կազմակերպությունների՝ համաձայն ՀՀ և ԱՀ հարկային մարմիններից ստացված տվյալների (ցուցակային)

1. Հայաստանի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ (6 ամիս)

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Վճարող կազմակերպություններ	24,572	25,365	27,369	27,184	23,047	17
Վճարողների քանակ	433,962	485,05	501,572	501,341	409,575	17
Վճարված գումար	433,962,000	485,055,000	501,572,000	501,341,000	409,575,000	17,000

2. Արցախի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ (6 ամիս)

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Վճարող կազմակերպություններ	1,978	1,939	1,869	1,691	1,332	10
Վճարողների քանակ	36,597	36,900	37,224	36,046	29,965	126
Վճարված գումար	36,597,000	36,900,000	37,224,000	36,046,000	29,965,000	126,000

II. 2018 և 2019թթ.-ի առաջին և երկրորդ կիսամյակների ընթացքում ստացված դրոշմանիշային վճարների հարաբերակցությունը (ՀՀ)

	Տարի	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
ՀՀ	*2018*[4]	484,997,000	493,483,000	491,198,000	502,032,000	493,968,000	447,045,000
	2019	433,962,000	485,055,000	501,572,000	501,341,000	409,575,000	17,000
ԱՃ	*Տոկոսային*	-10.52%	-1.71%	2.11%	-0.14%	-17.08%	-100.00%
	Գումարային	(51,035,000)	(8,428,000)	10,374,000	(691,000)	(84,393,000)	(447,028,000)

III. 2018 և 2019թթ.-ի առաջին և երկրորդ կիսամյակների ընթացքում ստացված դրոշմանիշային վճարների հարաբերակցությունը (ԱՀ)

	Տարի	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
ԱՀ	*2018*	35,576,000	36,022,000	36,196,000	36,055,000	36,035,000	35,591,000
	2019	36,597,000	36,900,000	37,224,000	36,046,000	29,965,000	126,000
ԱՃ	*Տոկոսային*	2.87%	2.44%	2.84%	-0.02%	-16.84%	-99.65%
	Գումարային	1,021,000	878,000	1,028,000	(9,000)	(6,070,000)	(35,465,000)

[4] 2018թ.-ի հաշվարկը կատարված է տարեվերջին և ոչ 2018թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում

V. Վերադարձեր

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների՝ 2019թ.-ի հունվարի 1-ից ապրիլի 30-ը Հիմնադրամը կազմակերպեց վճարված դրոշմանիշային վճարների վերադարձ՝

ա) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,

բ) զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,

գ) մեկից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) անձանց

Հիմնադրամ մուտքագրվել են թվով 6770 դիմումներ: Ստացված դիմումներից 6697-ը բավարարվել են և վերադարձման ենթական գումարները փոխանցվել են դիմորդներին: Մնացած 73 մերժվել են, քանզի ներկայացված փաստաթղթերը եղել են ոչ ամբողջական և ծանուցումից հետո հավելյալ չեն ներկայացվել հիմնադրամին:

	Դիմումների քանակ 2017թ.	***Դիմումների քանակ 2018թ.***
Ընդհանուր	***3150***	***6770***
1-ից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած անձանց	*2527*	4306
ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	*514*	1141
զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	*109*	1323

	Վերադարձված գումար 2017թ.	***Վերադարձված գումար 2018թ.***
Ընդհանուր	***46,992,500***	***94,016,000***
1-ից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած անձանց	38,953,500	*63,418,000*
ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	6,663,000	*14,510,000*
զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	1,376,000	*16,088,000*

2018թ.-ին ներկայացված դիմումների ընդհանուր թիվը գերազանցում է 2017թ.-ին ներկայացված դիմումների թվին շուրջ 53 %-ով քանակական և 50,02%-ով գումարային հարաբերակցությամբ:

2017 և 2018 թթ.-ին ներակացված դիմումների քանակական հարաբերակցություն



2017 և 2018 թթ.-ին ներակացված դիմումների գումարային հարաբերակցություն



2018թ.-ին ներկայացվաշ դիմումների տոկոսային հարաբերակցություն



2017թ.-ին ներկայացվաշ դիմումների տոկոսային հարաբերակցություն



2019թ.-ին www.1000plus.am կայքում ստեղծվել է էլեկտրոնային դիմումների ներկայացման հնարավորություն: Էլեկտրոնային դիմումները կազմում են դիմումների 56%-ը:

Վճարված գումարների վերադարձման գործընթացի չափագրման արդյունքներ

Գործընթացի չափագրումն իրականացվել է ամբողջությամբ, այն է՝ սկսած դիմումների ընդունումից մինչև դրանց բավարարումը: Դիտարկվել են նաև խնդրահարույց գործընթացները, այն է՝ գումարների հետվերադարձ, փաստաթղթերի անճշտություն, թերություն և այլն:

Արդյունքում՝ 1 դիմումի սպասարկման համար (ամբողջական գործընթաց) անհրաժեշտ ժամանակը կազմել է 00:46:12, ինչը ենթադրում է, որ աշխատանքային օրվա ընթացքում հնարավոր է, որ սկզբից մինչև վերջ սպասարկվի միջինում 10 դիմում: Մեկ դիմումի լիարժեք սպասարկման համար անհրաժեշտ աշխատակիցների թիվը կազմում է 10 աշխատակից:

Դիմումների հետ կապված գործողություններում ներգրավված հիմնական աշխատակիցների քանակը կազմել է 15, սակայն ծանրաբեռնվածության օրեցօր ավելացման պարագայում, սպասարկումը պատշաճ իրականացնելու համար, վերջին ամսվա ընթացքում ներգրավվել է ևս 10 աշխատակից, որոնք առավելապես իրականացրել են դիմումների ստուգման, համապատասխան բազա ներառման գործընթացներ:

Հաշվարկները կատարված են այն տրամաբանությամբ, որ աշխատակիցն ամբողջությամբ, լրիվ աշխատանքային օրով ներգրավված է այս աշխատանքում, չի իրականացնում որևէ այլ պարտականություն: Վերադարձի գործընթացի վրա աշխատել են ավելի քան 25 աշխատակիցներ: